



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 04/21**

22.02.2021թ.

ք. Երևան

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան ՀՀ Ազգային ժողովի 29.12.2020թ. թիվ ԱԺՈ-014-Ա որոշման սահմանադրականության հարցով:

Մանսավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ Ազգային ժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» ԱԺՈ-014-Ա որոշման համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Նաիրա Զոհրաբյանը հանդիսանում է ԱԺ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավոր: ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը վերապահվել է «Բարգավաճ Հայաստան» խմբակցությանը, որն էլ տվյալ պաշտոնում առաջադրել է Նաիրա Զոհրաբյանի թեկնածությունը: ԱԺ որոշմամբ վերջինս ընտրվել է այդ հանձնաժողովի նախագահ:

Ըստ Դիմողի՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Կանոնակարգ) 150-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ իրավասու էր (կարող էր) ներկայացնել բացառապես «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը:

Տվյալ դեպքում «Իմ քայլը» խմբակցությունը նախաձեռնել է Կանոնակարգով սահմանված կարգով որոշված մեկ այլ խմբակցությանը վերապահված հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման հարցը, ինչը հակասում է ՀՀ

Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասության և Կանոնակարգի 150-րդ հոդված 2-րդ մասի պահանջներին:

Դիմողը գտնում է, որ հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման հարցը նախաձեռնելիս «Իմ քայլը» խմբակցությունը սխալ է մեկնաբանել Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթն առ այն, որ «մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը»:

Ըստ Դիմողի՝ ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին ԱԺ որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի բացառապես այն խմբակցությունը, որին վերապահվել է տվյալ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը:

ՀՀ Սահմանադրության 106-րդ հոդվածը երաշխավորում է ԱԺ մշտական հանձնաժողովների ինստիտուտի գոյությունը և սահմանում դրանց հիմնական գործառույթները: Ավելին, 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանադրական մակարդակ է բարձրացվել համամասնության սկզբունքը, ինչպես հանձնաժողովներում պատգամավորական խմբակցությունների ներկայացուցչության, այնպես էլ հանձնաժողովների նախագահների պաշտոնների բաշխման հարցերում:

Կանոնակարգի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին համահունչ, խմբակցությանն իրավունք է վերապահում առաջադրելու մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի թեկնածու՝ իրեն ըստ համամասնության վերապահված պաշտոնում: Խմբակցության կամքի առաջնայնությունից և համամասնության սկզբունքի պահպանումից է ելնում նաև Կանոնակարգի 150-րդ հոդվածի 1-ին մասը՝ նախատեսելով հանձնաժողովի նախագահի կամ տեղակալի լիազորությունների ինքնաբերաբար դադարում (սպառիչ ցանկ):

Խմբակցության կամքի առաջայնությունն ամրագրված է նաև Կանոնակարգի 11-րդ հոդվածի 3-րդ մասում, ըստ որի՝ «խմբակցության անդամը խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի տեղում նշանակվում, ինչպես նաև հանձնաժողովի կազմից դուրս է գալիս խմբակցության որոշմամբ»:

Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթի՝ «Իմ քայլը» խմբակցության կատարած մեկնաբանության պարագայում ստացվում է, որ ԱԺ մշտական

հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին ԱԺ որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի ցանկացած խմբակցություն, այդ թվում՝ այլ խմբակցության կողմից առաջադրված և ԱԺ կողմից ընտրված հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարեցնելու հարցում:

Նման մեկնաբանությունը հակասության մեջ է Կանոնակարգի 11-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված սկզբունքի հետ: Հետևաբար, Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասության պահանջը պահպանելու և Կանոնակարգում ներքին հակասություններ չստեղծելու հանգամանքներով պայմանավորված՝ Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասում մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին ԱԺ որոշման նախագիծ ներկայացնելու սուբյեկտ պետք է դիտվի միայն այն խմբակցությունը, որն առաջադրել է հանձնաժողովի նախագահին: Եթե հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցնելու առաջակի սուբյեկտ հանդես գա նաև այլ խմբակցությունը, ապա հանձնաժողովի նախագահի պաշտոնանկությունը ակնհայտորեն կունենա քաղաքական դրդապատճառներ:

Ըստ Դիմողի, պատահական չէ, որ Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասում «խմբակցություն» եզրույթն օգտագործվել է եզակի թվով: Ակներև է, որ օրենսդիրն ի նկատի է ունեցել միայն մեկ խմբակցության՝ բացառապես տվյալ մշտական հանձնաժողովի նախագահ առաջադրելու իրավասություն ունեցող պատգամավորական խմբակցությանը: Հարկ է նկատել, որ բոլոր այն դեպքերում, երբ ամրագրվել է համընդհանուր հնարավոր վարքագիծ՝ իրավունք կամ լիազորություն, Կանոնակարգում «խմբակցություն» եզրույթն օգտագործվել է հոգնակի թվով (Կանոնակարգի 7, 8, 11, 40-րդ հոդվածները և այլն):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դիմողը գտնում է, որ վիճարկվող որոշումն ընդունվել է օրենքի խախտմամբ և հակասում է ՀՀ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ Ազգային ժողովի 29.12.2020թ. թիվ ԱԺՈ-014-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Վիճարկվող որոշման բովանդակությունը կայանում է հետևյալում.

«Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածը՝

Ազգային ժողովը **որոշում է.**

Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի լիազորությունները՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ»:

Որոշումն ուժի մեջ է մտել 30.12.2020 թվականին:

Որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը պարզելու համար պետք է պարզել հետևյալ հարցը՝ ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին ԱԺ որոշման նախագիծ ներկայացնելու իրավասություն ունի ցանկացած ծխմբակցություն, թե՞ միայն այն խմբակցությունը, որին վերապահվել է տվյալ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը, և առաջադրված թեկնածուն նշանակվել է այդ պաշտոնում:

Սահմանադրության 88-րդ հոդվածի համաձայն՝

1. Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է:
2. Ազգային ժողովն իրականացնում է օրենսդիր իշխանությունը:
3. Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

4. Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ:

5. Ազգային ժողովը գործում է իր կանոնակարգին համապատասխան:

Այսպես, ՀՀ Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմին է, որն իրականացնում է օրենսդիր իշխանությունը: Այն իր լիազորությունները և գործառույթներն իրականացնելիս գործում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Կանոնակարգ) համապատասխան՝ նստաշրջանների, նիստերի, ինչպես նաև իր մարմինների աշխատանքի միջոցով: Ազգային ժողովի մարմիններն են պատգամավորները, Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները, խմբակցությունները, հանձնաժողովները և Ազգային ժողովի խորհուրդը (Կանոնակարգ, հոդված 2):

Կանոնակարգի 7-րդ հոդվածի համաձայն՝

1. Խմբակցություններն ստեղծվում են նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը՝ Ազգային ժողովի մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) թվին և անվանումներին համապատասխան:

2. Խմբակցությունում ընդգրկվում են միննույն կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակով մանդատ ստացած պատգամավորները:

Կանոնակարգի 9-րդ հոդածի համաձայն՝ խմբակցությունը գործում է Կանոնակարգին և իր որոշմամբ հաստատված կանոնադրությանը համապատասխան: Խմբակցություններն իրավունք ունեն Ազգային ժողովի առաջին նստաշրջանում մշտական հանձնաժողովների ստեղծման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնել (Կանոնակարգ, հոդված 112):

Խմբակցության լիազորությունները սահմանված են Կանոնակարգի 8-րդ հոդածով, որի համաձայն՝

1. Խմբակցությունն իրավունք ունի Կանոնակարգով սահմանված կարգով՝

5) մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի իրեն վերապահված պաշտոնում առաջադրելու թեկնածու.

4. Ընդդիմադիր խմբակցությունն ունի Կանոնակարգով սահմանված գործունեության երաշխիքներ:

Սահմանադրության 106-րդ հոդածի համաձայն՝

1. Ազգային ժողովն օրենքների նախագծերի, իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար ստեղծում է մշտական հանձնաժողովներ: Ազգային ժողովում կարող է ստեղծվել ոչ ավելի, քան տասներկու մշտական հանձնաժողով:

2. Մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնները խմբակցությունների միջև բաշխվում են խմբակցությունում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:

Մշտական հանձնաժողովերը կազմավորվում են Կանոնակարգի 11-րդ հոդվածին համապատասխան, համաձայն որի՝

1. Մշտական հանձնաժողովի կազմը և դրանում փոփոխությունները հաստատում է Ազգային ժողովի նախագահը, եթե պահպանված են սույն հոդվածով սահմանված սկզբունքները:

2. Մշտական հանձնաժողովում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ:

3. Խմբակցության անդամը խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի տեղում նշանակվում, ինչպես նաև հանձնաժողովի կազմից դուրս է գալիս խմբակցության որոշմամբ:

Կանոնակարգի 138-րդ հոդվածի համաձայն՝

1. Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրություններն անցկացվում են Ազգային ժողովի առաջին նստաշրջանում, ինչպես նաև նրանց պաշտոնը թափուր մնալու դեպքում:

2. Մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի թեկնածու առաջադրելու իրավունք ունի սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով որոշված խմբակցությունը: Թեկնածուների առաջադրման իրավունքը պահպանվում է մինչև Ազգային ժողովի լիազորությունների ավարտը:

3. Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում պատգամավորների կազմից թեկնածուների առաջադրման իրավունքը խմբակցությունների միջև բաշխվում է Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը՝ ըստ յուրաքանչյուր պաշտոնի համար ստացված գործակիցի, որը հաշվարկվում է $G_{\text{խ}} = A_{\text{խ}} / (N_{\text{խ}} + 1)$ բանաձևով, որտեղ՝

1) $G_{\text{խ}}$ -ն յուրաքանչյուր պաշտոնի համար խմբակցության ստացած գործակիցն է.

2) $A_{\text{խ}}$ -ն խմբակցության անդամների ընդհանուր թիվն է.

3) $N_{\text{խ}}$ -ն հերթական պաշտոնի համար խմբակցության գործակիցը հաշվելիս թեկնածու առաջադրելու իրավունքով խմբակցությանը վերապահված մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոնների ընդհանուր թիվն է: Գործակիցների հաշվարկի սկզբում $N_{\text{խ}}$ -ն հավասար է զրոյի:

4. Գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը վերապահվում է մշտական հանձնաժողովների նախագահներից կամ

նրանց տեղակալներից մեկի թեկնածուին առաջադրելու իրավունքը: Հաջորդ պաշտոնում առաջադրելու իրավունքը վերապահվում է մյուս խմբակցությունների համեմատ առավել մեծ գործակից ունեցող խմբակցությանը: Հավասար՝ ամենամեծ գործակիցների դեպքում մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի հերթական պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը որոշվում է հավասար գործակիցներ ունեցող խմբակցությունների փոխհամաձայնությամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ վիճակահանությամբ: Գործակիցների հաշվարկը կրկնվում է մինչև մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների՝ վերջին պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը որոշելը:

5. Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը որոշելուց հետո խմբակցությունները կարող են փոխհամաձայնությամբ փոխանակել կամ միմյանց զիջել մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը:

6. Մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածուներն առաջադրվում են՝

1) Ազգային ժողովի առաջին նստաշրջանում՝ յուրաքանչյուր մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության հարցի քննարկման սկզբում.

2) մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

7. (մասն ուժը կորցրել է 22.06.20 ՀՕ-309-Ն)

8. Մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության հարցն Ազգային ժողովի նիստում քննարկվում է Կանոնակարգի 135-րդ հոդվածով սահմանված կարգով:

9. Մշտական հանձնաժողովի նախագահն ընտրվում է գաղտնի քվեարկությամբ, քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

10. Եթե մշտական հանձնաժողովի նախագահը չի ընտրվում, ապա իրավասու խմբակցությունը քվեարկությունից հետո՝ տասնօրյա ժամկետում, թափուր մնացած պաշտոնի համար առաջադրում է նոր թեկնածու:

11. Մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալն ընտրվում է իրավասու խմբակցության ղեկավարի կամ քարտուղարի առաջադրմամբ՝ հանձնաժողովի որոշմամբ: Մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրությունն

անցկացվում է հանձնաժողովի կազմը հաստատվելուց, ինչպես նաև նրա պաշտոնը թափուր մնալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

12. Եթե խմբակցությունը Կանոնակարգով սահմանված ժամկետում մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրեն վերապահված թափուր պաշտոնում թեկնածու չի առաջադրում, ապա տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը:

Կանոնակարգի 150-րդ հոդվածի համաձայն՝

2. Մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը:

3. Մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման հարցն Ազգային ժողովի նիստում քննարկվում է Կանոնակարգի 149-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, հետևյալ տարբերությամբ՝ հիմնական զեկուցողից հետո ելույթ կարող է ունենալ, հարցերին պատասխանել, ինչպես նաև եզրափակիչ ելույթ մշտական հանձնաժողովի նախագահ:

4. Մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ, քվեարկությանը մասնակցող պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

ՀՀ Սահմանադրության և Կանոնակարգի վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ Ազգային ժողովն օրենքների նախագծերի, իր իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաև խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար ստեղծում է մշտական հանձնաժողովներ: Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների ընտրություններն անցկացվում են Ազգային ժողովի առաջին նստաշրջանում, ինչպես նաև նրանց պաշտոնը թափուր մնալու դեպքում: Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոններում պատգամավորների կազմից թեկնածուների առաջադրման իրավունքը պատկանում է խմբակցություններին: Մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում պատգամավորների կազմից թեկնածուների

առաջադրման իրավունքը խմբակցությունների միջև բաշխվում է Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը՝ ըստ յուրաքանչյուր պաշտոնի համար ստացված գործակցի, որը հաշվարկվում է Կանոնակարգի 138-րդ հոդվածով սահմանված բանաձևով: Գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը վերապահվում է մշտական հանձնաժողովների նախագահներից կամ նրանց տեղակալներից մեկի թեկնածուին առաջադրելու իրավունքը: Հաջորդ պաշտոնում առաջադրելու իրավունքը վերապահվում է մյուս խմբակցությունների համեմատ առավել մեծ գործակից ունեցող խմբակցությանը: Գործակիցների հաշվարկը կրկնվում է մինչև մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների՝ վերջին պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը որոշելը: Եթե մշտական հանձնաժողովի նախագահը չի ընտրվում, ապա իրավասու խմբակցությունը քվեարկությունից հետո՝ տասնօրյա ժամկետում, թափուր մնացած պաշտոնի համար առաջադրում է նոր թեկնածու: Եթե խմբակցությունը Կանոնակարգով սահմանված ժամկետում մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի՝ իրեն վերապահված թափուր պաշտոնում թեկնածու չի առաջադրում, ապա տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է Կանոնակարգի 138-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով խմբակցությունների գործակիցների հաշվարկի սկզբում ամենամեծ գործակիցն ունեցող խմբակցությանը:

Նշվածից հետևում է, որ ըստ իրենց գործակցի՝ յուրաքանչյուր խմբակցություն իրեն վերապահված մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում առաջադրում է իր թեկնածուին: Այսինքն՝ մշտական հանձնաժողովների նախագահներն առաջադրվում են տարբեր խմբակցությունների կողմից: Ստացվում է, որ 12 հնարավոր մշտական հանձնաժողովների նախագահները լինում են ոչ թե մեկ, այլ տարբեր խմբակցություններից:

Անդրադառնալով մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցմանը՝ Կանոնակարգի 150-րդ հոդվածը սահմանում է, որ մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը:

«Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում

պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից: Ինչը նշանակում է, որ եթե տվյալ իրավական ակտում կոնկրետ հարաբերության կարգավորման տեսանկյունից խիստ անհրաժեշտ իմաստը բացակայում է, ապա այն կարող է իրավաչափորեն բխեցվել իրավական համակարգի համալիր վերլուծության արդյունքից:

Դատելով իրավագիտության աղբյուրներում, դատական ակտերում (այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումներում) արտացոլված մոտեցումներից՝ կարող ենք եզրակացնել, որ իրավական որոշակիության հիմնական երաշխիք է համարվում իրավական նորմերի, դրանցում օգտագործված եզրույթների անհրաժեշտ հստակությունը, մասնավորապես նախապատվությունը տրվում է այնպիսի եզրույթների օգտագործմանը, որոնց իրազեկվածության առնչությամբ գործնականում խնդիրներ չեն ծագում: Սակայն չպետք է անտեսել, որ գերխնդիրը տվյալ դեպքում ոչ թե իրավական նորմերի հստակությունն է, այլ դրանց իմաստը համարժեք բացահայտելու և դրան համապատասխան իրավակիրառ պրակտիկա ձևավորելու մշակույթը: Այս տեսանկյունից առնվազն իրավաչափ չէ անվերապահորեն, առանց նախապես սահմանված չափանիշների ակնկալել իրավական նորմերի հստակություն սուկ օրենսդրական փոփոխությունների միջոցով: Իրավական նորմի հստակություն հնարավոր է ապահովել նաև համապատասխան մեկնաբանությունների և պարզաբանումների միջոցով:

Համակարգային վերլուծության և մեկնաբանման արդյունքում կարող ենք փաստել, որ օրենսդիրը, նախատեսելով, որ մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոններում պատգամավորների կազմից թեկնածուների առաջադրման իրավունքը պատկանում է խրակցություններին՝ ըստ իրենց գործակիցների, նույն կերպ «մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը» ձևակերպմամբ ի նկատի է ունեցել այն խմբակցությանը, որի կողմից առաջադրվել է տվյալ հանձնաժողովի

նախագահը: Նշվածը բխում է ինչպես Կանոնակարգի 138-րդ հոդվածի տրամաբանությունից, այնպես էլ իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքից, Կանոնակարգի 8-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված երաշխիքից: Խմբակցության կամքի առաջնայնությունն ամրագրված է նաև Կանոնակարգի 11-րդ հոդվածի 3-րդ մասում, ըստ որի՝ «խմբակցության անդամը խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի տեղում նշանակվում, ինչպես նաև հանձնաժողովի կազմից դուրս է գալիս խմբակցության որոշմամբ»:

ՀՀ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, 2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՌ-1270 որոշման մեջ արձանագրել է. «7. ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի: ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՍԴՌ-630, ՍԴՌ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում»:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում նշել է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու, թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում:

2014 թվականի ապրիլի 18-ի ՍԴՌ-1148 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է. Ո6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական

պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը: Փաստն այն է, որ վեճի առարկա իրավահարաբերությունների շրջանակում խախտվում է անձի օրինական ակնկալիքների իրավունքը:»:

Ասվածից բխում է, որ մշտական հանձնաժողովի նախագահն, առաջադրված լինելով կոնկրետ խմբակցության կողմից, օրինական ակնկալիք ունի, որ իր՝ այդ պաշտոնում լիազորությունները կարող են դադարեցվել ճիշտ նույն ընթացակարգով՝ այն խմբակցության կողմից համպատասխան որոշման նախագիծ ներկայացնելով, որի կողմից առաջադրվել է տվյալ պաշտոնում (հաշվի առնելով նաև, որ Կանոնակարգի 11-րդ հոդվածով նույն կարգն է գործում նաև խմբակցության անդամի համար («խմբակցության անդամը խմբակցությանը վերապահված հանձնաժողովի անդամի տեղում նշանակվում, ինչպես նաև հանձնաժողովի կազմից դուրս է գալիս խմբակցության որոշմամբ»)):

Նման կարգավորմամբ նաև ապահովվում և երաշխավորվում է մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների կայունությունը, ընդդիմադիր խմբակցության անկաշկանդ գործունեությունը: Հակառակ պարագայում, ցանկացած խմբակցություն, որը նաև մեծամասնություն է կազմում Ազգային ժողովում, կկարողանա ցանկացած ժամանակ ներկայացնել որևէ մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման նախագիծ և, ԱԺ-ում լինելով մեծամասնություն, ընդունել նախագիծը: Արդյունքում, մշտական հանձնաժողովների նախագահներն իրենց գործունեության ընթացքում կլինեն կաշկանդված, կախվածության մեջ կդրվեն ԱԺ-ում մեծամասնություն կազմող խմբակցությունից, կխախտվի հավասարակշռությունը իշխանության և ընդդիմության միջև: Նման կարգավորումը կհակասի նաև Կանոնակարգի 8-րդ հոդվածի 4-րդ մասին, համաձայն որի՝ ընդդիմադիր խմբակցությունն ունի Կանոնակարգով սահմանված գործունեության երաշխիքներ:

Օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է հաղթահարվել համապատասխան մեկնաբանություններով և պարզաբանումներով:

Վերոգրյալը հաստատվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով, մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Case of Busuioac v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004) վճռում դատարանը գտել է. «...որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, սակայն դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է»:

Գտնում ենք, որ Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասը թեև որոշակի առումով թերի է ձևակերպված, այնուամենայնիվ համակարգային վելուծության արդյունքում հանարավոր է վեր հանել այն ընդունող մարմնի նպատակը և ձևակերպման բացը լրացնել տվյալ նորմի մեկնաբանություններով և պարզաբանումներով:

Վերոգրյալի լույսի ներքո՝ հանգում ենք այն եզրակացության, որ ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին ԱԺ որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի այն խմբակցությունը, որին վերապահվել է տվյալ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքը, և առաջադրված թեկնածուն նշանակվել է այդ պաշտոնում: Տվյալ դեպքում, հիմք ընդունելով նաև ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, գտնում ենք, որ «Իմ քայլը» խմբակցությունը իրավասու չէր ներկայացնել «Բարգավաճ Հայաստան» խմբակցությանը վերապահված մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին ԱԺ որոշման նախագիծ: Վիճարկվող որոշումն ընդունվել է Կանոնակարգի 150-րդ հոդվածի 2-րդ մասի սխալ մեկնաբանման արդյունքում, չի բխում օրինականության և կանխատեսելիության սկզբունքներից և հակասում է ՀՀ Սահմանադրության և Կանոնակարգի ինչպես ընդհանուր տրամաբանությանը, այնպես էլ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված 1-ին մասին և 106-րդ հոդվածի 2-րդ մասին: Որոշումն իր գոյությամբ կաշկանդում է մշտական հանձնաժողովների նախագահների գործունեությունը, վերջիններիս կախվածության մեջ դնում մեծամասնություն կազմող խմբակցությունից, սովերում իրեն իրավական հոշակած պետության մեջ օրինականության սկզբունքը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին» Ազգային ժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ ԱԺՈ-014-Ա որոշման՝ Սահմանադրությանը համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը խնդրահարույց է:

 Recoverable Signature

Համակարգող՝

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169